Տեխնիկական առաջադրանք

Տեսուչների և զուգարանային տնակները ոչ կապիտալ կառույցներ են: Իրենցից ներկայացնում են փայտյա կմախքի վրա հավաքված փայտյա պարփակվող կոնստրուկցիաներով շինություններ: Կառույցների պատերի երեսպատումը պետք է իրականացվի սոճու կիսակլոր սղոցատախտակով: Տանիքների կառուցումը իրականացվում է անդուլինային ծածկով: Տեղադրվող պատուհանները և դռները պետք է լինեն մետաղապլաստից: Պատերի, հատակի և առաստաղի ջերմամեկուսացումը պետք է լինի բնական ծագման ջերմամեկուսիչ նյութերով: Կառույցների փայտային մակերեսները պատվում են հակահրդեհային և հակամիջատային նյութերով: Տնակների տեղադրման վայրում պետք է իրականացվեն անհրաժեշտ հողային աշխատանք և կառույցները տեղադրվելու են հողի մակերեսից 45 սմ բարձրության բետոնե հենասյուների վրա:

Տեսուչների տնակը պետք է բաղկացած լինի երկու սենյակներից՝ տեսուչների և տնտեսական, յուրաքանչյուրը իր առանձին դռնով: Տնակի պատերը և առաստաղը ներսից պատվելու են նրբատախտակներով («վագոնկա»): Հատակը վինիլային է: Տնակը պետք է ունենա բաց պատշգամբ փայտե բազրիքներով, հատակով և աստիճանավանդակով: Տնակում անհրաժեշտ է կատարել էլեկտրականության գծերի արտաքին և ներքին մոնտաժ:

Զուգարանային տնակը պետք է բաղկացած լինի սպասարկողի սենյակից և զուգարանային սենյակից, որը ներառում է երեք մեկուսացված զուգարաններ և լվացարանների հատված: Սպասարկողի սենյակի պատերը, ինչպես նաև ամբողջ տնակի առաստաղը ներսից պատվում են նրբատախտակներով («վագոնկա»): Սպասարկողի սենյակի և լվացարանի հատվածի հատակը պետք է լինի վինիլային, իսկ զուգարանասենյակների հատակը՝ մետլախով սալիկապատ:
Զուգարանների և լվացարանային հատվածի պատերը պետք է լինեն ջրանթափանցելի նյութերից (պլաստիկ): Տնակում պետք է տեղադրված լինեն երեք զուգարանակոնքեր և երկու լվացարան: Տնակում անհրաժեշտ է կատարել էլեկտրականության գծերի և ջրամատակարարման գծերի արտաքին և ներքին մոնտաժ: Սանհանգույցի կոյուղին միացվում է տնակի մոտ նախատեսվող կեղտաջրերի հորանին:

Տեսուչների և զուգարանային տնակների գծագրերը տրված են կից Հավելված 2-ում և 3-ում: